ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ժամը 12-00 դրությամբ

Հ/Հ	Աղբյուրը	Վայր		Ներկայացված փաստը	Փաստի հավաստիությունը	Ում հետ է ճշտվել փաստը	Պարզաբանում կամ ձեռնարկված միջոցառում
		Ընտրա-տարածք	Ընտրական տեղամաս				
1	http://www.lurer.com/?p=77869&l=am			Երևան, Ավան, 1/6 ԸՏ–Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ դիտորդն արձանագրել է, որ կնքված քվեատուփի տակի հատվածում ճեղք կա, որից հնարավոր է քվեատուփ մտցնել: Հանձնաժողովի նախագահը պարզաբանել է, որ տուփը հանձնաժողովի բոլոր անդամները ստուգել են և կնքել, և հնարավոր է, որ մյուս տեղամասերում էլ նման տուփեր լինեն: Նույն տեղամասում Ռաֆֆի Հովհաննիսյանի վստահված անձը դիտորդին հայտնել է, որ հանձնաժողովո իրեն աշխատելու հնարավորություն չի տալիս, մասնակից չի դարձնում ընտրական գործընթացին և որևէ տեղեկություն չեն տրամադրում:		ՏԸՀ նախագահ Հայրապետյան Նազիկ	Բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներին ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան հատկացվել են թափանցիկ քվեատուփեր, որոնք ներքևի մասում (տակը) ունեն փոքրիկ անցքեր: ՏԸՀ նախագահ Նազիկ Հայրապետյանը հաղորդեց, որ որևէ վստահված անձի իրավունքների սահմանափակման կամ խոչընդոտման դեպք չկա: Միաժամանակ ԿԸՀ-ն պարզաբանում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները կարող են բողոքարկվել վերադաս ընտրատարածքայինընտրական հանձնաժողով:
2	Զանգվածային լրատվության միջոց			18.02.2013թ. ժամը 9:20-ի դրությամբ ԳՈՒՄ ՀԿ-ի դիտորդն արձանագրել է, որ Գորիս քաղաքի թիվ 37/7 ընտրատեղամասում Սերժ Սարգսյանի վստահված անձիք երկուսն են: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին և ստացել այն պատասխանը, որ դա հնարավոր է և օրենքով սահմանված է 2 վստահված անձի ներկայությունը: Դիտորդը հղումը տվել է օրենքին և նախագահին ապացուցել, որ ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն Հոդված 33-ի 8.3-ի ընտրատեղամասում կարող է գտնվել յուրաքանչյուր նախագահի թեկնածուի մեկ վստահված անձ: Գործընկերություն և Ուսուցում, Գորիս		ՏԸՀ Միրզաթունյան Գարիկի հետ	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ տեղամասային կենտրոնում այս պահի դրությամբ՝ 10:00-ի սահմաններում ներկա է մեկ թեկնածուի մեկ վստահված անձ:

3	Զանգվածային լրատվության միջոց			Տաշիրի 32/5 ընտրատարածքում լցոնման փաստեր են արձանագրվել:		ՏԸՀ նախագահ Արմենուհի Ավետյան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ ընտրողը ցանկացել է քվեարկել հիվանդ մոր փոխարեն: ՏԸՀ նախագահի կողմից խախտումը կանխվել է, ինչի մասին կազմվել է արձանագրություն, ինչը չի կարող որակվել որպես լցոնում:
4	Զանգվածային լրատվության միջոց			Մեղրիի 38/62 ընտրատեղամասում Սերժ Սարգսյանի վստահված անձի վկայականի վրա չի եղել նշված անձը հաստատող տվյալներ, դիտորդի միջամտությունից հետո վստահված անձը դժկամությամբ, բայց շտկել է իրավիճակը: ԳՈՒՄ ՀԿ-ի դիտորդ		ՏԸՀ նախագահ Միրզոյան Սոնա	10:20-ի դրությամբ թիվ 38/62 ՏԸՀ-ում ներկա է 1 թեկնածուի 1 վստահված անձ՝ Անաստաս Պետրոսյանը , որի վկայականը ԿԸՀ սահմանված նմուշի է և սահմանված կարգով լրացված:
5	Զանգվածային լրատվության միջոց			Գեղարքունիքի մարզ, 40/33 ԸՏ – Մեր դիտորդն արձանագրել է բաց քվեարկության դեպք:		ՏԸՀ նախագահ Ասլանյան Նաիրա	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ ընտրողը ցանկացել է բաց քվեարկել, սակայն ՏԸՀ նախագահի կողմից կանխվել է: Ընտրողին բացատրվել է քվեարկության կարգը և բաց քվեարկելու իրավական հետևանքները: Ընտրողը քվեարել է գաղտնի, քվեարկության խցիկում:
6	Զանգվածային լրատվության միջոց			Ապարան, 14/21 ԸՏ – Դիտորդն արձանագրել է, որ քվեախցիկում տարեց կնոջն օգնել են քվեարկել երկու անձինք, ինչն Ընտրական օրենսգրքի խախտում է: Հանձնաժողովի նախագահը ոչինչ չի ձեռնարկել խախտումը կանխելու համար՝ պատճառաբանելով, որ կինը շատ ծեր է և դժվարանում է քվեարկել:		ՏԸՀ նախագահ Քոչարյան Նշան	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ տարեց կնոջն օգնել է միայն մեկ անձ, այսինքն պահպանվել է ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը:

7	Զանգվածային լրատվության միջոց			Երևան, Դավիթաշեն, 5/8 ԸՏ – ՔՀԻ դիտորդին հանձնաժողովի նախագահը չի գրանցել և ներս չի թողել՝ պատճառաբանելով, որ նրա դիտորդական վկայականը պետք է լինի տեսանելի տեղում կպցված: Ընտրական օրենսգրքում նման պահանջ չկա և դիտորդական վկայականը ցույց տալը բավարար է գրանցվելու և տեղամաս մուտք գործելու համար:		ՏԸՀ նախագահ Միսակյան Հայարփի	ՏԸՀ նախագահի հաղորդմամբ դիտորդը չի ներկայացրել դիտորդական առաքելություն իրականացնելու իր վկայականը, պատճառաբանելով,որ մեքենայի մեջ է գտնվում: ՏԸՀ նախագահը հնարավորություն է տվել ներկայացնելու վկայականը, բայց դիտորդը ոչ միայն չի ներկայացրել վկայականը, այլև անձամբ չի ներկայացել: Միաժամանակ պարզաբանվում է, որ Ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն հանձնաժողովի նիստին (ներառյալ՝ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակում) ներկա լինելու իրավունք ունեցող անձինք (բացառությամբ քվեարկողների և տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների) վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով կրում են ներկա լինելու իրավունքը հավաստող վկայական: Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների դիտորդներն ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա լինելու համար պետք է կրեն նաև ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու կամ դիտորդական առաքելություն իրականացնելու որակավորման վկայականը: Հանձնաժողովի նախագահն արգելում է ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում (ընտրական տեղամասում):
10	http://tert.am/am/news/2013/02/18/masis/			Թիվ 16/06 տեղամասում Սերժ Սարգսյանը ունի երկու վստահված անձ, երկուսն էլ այս պահի դրությամբ գտնվում են տեղամասում:		թիվ 16/6 ՏԸՀ նախագահ Սմբատ Սարիբեկյան	Ըստ 16/06 ընտրական տեղամասի նախագահ Սմբատ Սարիբեկյանի նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, քվեարկության սենյակում ներկա են յուրաքանչյուր թեկնածուի 1 վստահված անձ:
11	http://www.slag.am/arm/news/117960/			Գյումրու 41-րդ դպրոցում տեղավորված 34/06 տեղամասում «Գյումրի-Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցիչը նկատել է, որ ընտրողներից մեկին փորձել են գրանցել եւ քվեաթերթիկ տալ բոլորովին ոչ իր անուն-ազգանվան դիմաց: Ահազանգել է հանձնաժողովի նախագահին, առաջարկելով արձանագրել միջադեպը, այնինչ հանձնաժողովի նախագահը, սկսել է բողոքել, թե «...դու չէ, որ ինձ պիտի ասես, թե ինչ անեմ», եւ չի արձանագրել միջադեպը:		թիվ 34/06 ՏԸՀ նախագահ Գևորգ Մինասյան	ըստ ընտրատեղամասի նախագահ Գևորգ Մինասյանի հանձնաժողովի անդամը թյուրիմացաբար ընտրացուցակում սխալ տեղում է նշում կատարել, որը ուղղվել է և արձանագրվել է այդ փաստը գրանցամատյանում

12	http://www.slag.am/arm/news/117960/			Գյումրու 18-րդ դպրոցում տեղավորված 35/39 տեղամասի հանձնաժողովի նախագահը արգելում է դիտորդներին եւ ԶԼՄ ներկայացուցիչներին դիտել եւ հսկել քվեարթերթիկ հատկացնելու գործընթացը մոտիկից, տեսնել մատյանում գրանցման պրոցեսը, եւ արդյո՞ք՝ ընտրողն իր անվան դիմաց է ստորագրում քվեաթերթիկ ստանալիս: Հանձնաժողովի նախագահը պարտադրում է դիտորդներին եւ վստահված անձանց նստել հատկացված տեղերում եւ չտեղաշարժվել տեղամասում: «Գյումրի-Ասպարեզ» օրաթերթը եւ www.asparez.am հայտարարում է, որ այսպիսով խոչընդոտվել է իր՝ ԶԼՄ ներկայացուցչի աշխատանքը այդ տեղամասում: Asparez.am		թիվ 35/39 ՏԸՀ նախագահ Սամվել Գրիգորյան	Դիտորդը փորձել է նստել գրանցում իրականացնող և քվեաթերթիկ հատկացնող անդամների միջև վստահված անձի համար նախատեսված տեղում : Հանձնաժողովի նախագահի կողմից բացատրվել է որ դիտորդը կարող է ծրջել և ներկա գտնվել գործառույթ իրականացնող հանձնաժողովի անդամների կողմից և առանց միջամտելու հետևել նրանց աշխատանքներին: